



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

31 օգոստոսի 2011 թվական N 119-Ա

**ք. Հրազդան**

**Ա. ԲԱՎԵՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 25-ի N 337-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 14 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2011 թվականի օգոստոսի 18-ի N 8 որոշումը՝

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.**

1. *Անդրանիկ Բավեյանին* 2011 թվականի օգոստոսի 31-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 14 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



**Կ. ԲԱՎԵՅԱՆ**